ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/45» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Նավասարդյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Հայրապետյանը, Հ. Սարգսյանը, Գ. Ավետիսյանը, Լ. Մովսիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Մուրադյանը

1. Հայտերի գնահատման մասին

(Գ. Նավասարդյան)

1.1. Հայտերի գնահատման.

- վայրը՝ Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 321 սենյակ
-օրը՝ 11.02.2020 թ.
-ժամը՝ 11:00

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի՝ սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Գ. Նավասարդյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, **բացառությամբ.**

Գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման արդյունքում արձանագրեց, որ Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանի կողմից (այսուհետ՝ մասնակից) ներկայացված Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի պահանջներին, այն է՝ մասնակիցը չի տրամադրել առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.2 Գնահատող հանձնաժովը հիմք ընդունելով Կարգի 41 կետը, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է

բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց շտկված փաստաթղթերի գնահատումն իրականացնելու նպատակով նիստ հրավիրել 2020 թվականի փետրվարի 13-ին ժամը 11:00-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝		Գ. Նավասարդյան
Անդամներ՝		Ս. Հայրապետյան
		Հ. Սարգսյան
		Գ. Ավետիսյան
		Լ. Մովսիսյան
Համակարգող՝		Գ. Մուրադյան